ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-88/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25020-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Հարություն Հարությունյանին (ՀՎՀՀ՝ 27913868) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-88/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-3/16054-16 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1496 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ա/Ձ Հարություն Հարությունյանի 23.06.2016թ. գրությունը, պարզեց.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1496 գրության հիման վրա, 08.06.2016թ. թիվ 1/73-3/16054-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Հարություն Հարությունյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1496 գրությունը և նրան ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 19.09.2016թ. թիվ 01/04.1/3495-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2016թ. թիվ 1/73-3/16054-16 գրության հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացում և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (***19.05.2016թ.***) հաշված մեկ տարվա ընթացքում Ա/Ձ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ա/Ձ-ն կարող է ներառվել Ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.11.2016թ. թիվ 03/73-3/25020-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ա/Ձ Հարություն Հարությունյանը խախտումը թույլ տալու օրվանից ***19.05.2016թ.-ից*** հաշված մեկ տարվա ընթացքում՝ ***23.09.2016թ. կրկին հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված*** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

<u>2. Ա/Ձ Հարություն Հարությունյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 15.06.2016թ. թիվ 01/04.1/2319-16 գրությամբ դիմել է Ա/Ձ Հարություն Հարությունյանին:

Ա/Ձ-ն 23.06.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերջինս մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում Ա/Ձ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, որոնք շտկելու համար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նիստը մեկ օրով կասեցվել է:

Ա/Ձ-ն նշել է, որ վերջինս Պատվիրատուի կողմից նշված թերությունները շտկել է, սակայն անզգուշությամբ էլեկտրոնային փոստով ուղարկելու ժամանակ, սխալմամբ կցել է սխալ ֆայլ, որի վերաբերյալ իմացել է ուշացումով և բաց է թողել վերը նշված փաստաթղթերն ուղարկելու օրենքով սահմանված ժամկետը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.06.2016թ. թիվ ԴՎԱ/1496 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է, որ Ընթացակարգին հայտ ներկայացրած Ա/Ձ-ն ծանուցվել է ներկայացնելու Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սահմանված ժամկետում Ա/Ձ Հարություն Հարությունյանի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա էր անհամապատասխանություն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ պահանջելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացված 243-րդ, 244-րդ, 252-րդ, 253-րդ, 257-րդ և 258-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են եղել անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված չափաբաժինների մասով մերժել է Ա/Ձ-ի հայտը:

4. ՍՑ-ԳԲԽ-88/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25020-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Հարություն Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի թվով 38 չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Հարություն Հարությունյանը:

2. Ա/Ձ-ն հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 8-17-րդ, 24-րդ, 25-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 129-րդ, 130-րդ, 131-րդ, 146-րդ, 147-րդ, 148-րդ, 180-րդ, 181-րդ, 243-րդ, 244-րդ, 252-րդ, 253-րդ, 257-րդ, 258-րդ, 266-273-րդ, 291-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ա/Ձ-ն պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգի 8-17-րդ, 24-րդ, 25-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 129-րդ, 130-րդ, 131-րդ, 146-րդ, 147-րդ, 148-րդ, 180-րդ, 181-րդ, 243-րդ, 244-րդ, 252-րդ, 253-րդ, 257-րդ, 258-րդ, 266-273-րդ, 291-րդ չափաբաժիններով որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Հարություն Հարությունյանին:

4. Նույն արձանագրության 4.2 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Հարություն Հարությունյանի կողմից ներկայացված 243-րդ, 244-րդ, 252-րդ, 257-րդ և 258-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ՝ հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը որոշել է մերժել Ա/Ձ-ի հայտը նշված չափաբաժինների մասով:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.11.2016թ. թիվ 03/73-3/25020-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ա/Ձ Հարություն Հարությունյանը խախտումը թույլ տալու օրվանից ***19.05.2016թ.-ից*** հաշված մեկ տարվա ընթացքում՝ ***23.09.2016թ. կրկին հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված*** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-88/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ փաստաթուղթ:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, ***իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում*** այդ որակավորման չափանիշները կամ ***տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի թվով 38 չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Հարություն Հարությունյանը և արդունքում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ա/Ձ-ն հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Ա/Ձ Հարություն Հարությունյանի կողմից ներկայացված 243-րդ, 244-րդ, 252-րդ, 257-րդ և 258-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով որոշել է կասեցնել նիստը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով հաշվի առնելով այն հանգամանքը, որ 243-րդ, 244-րդ, 252-րդ, 257-րդ և 258-րդ չափաբաժինների ***տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունները չէին շտկվել,*** որոշել է մերժել Ա/Ձ-ի հայտը նշված չափաբաժինների մասով:

Ա/Ձ Հարություն Հարությունյանը Կենտրոնին ուղղված 23.06.2016թ. գրությամբ հայտնել է, որ վերջինիս կողմից շտկվել են առկա անհամապատասխանությունները, սակայն էլեկտրոնային փոստով շտկված փաստաթղթերն ուղարկելու ժամանակ անզգուշությամբ կցել է սխալ ֆայլ:

Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ Հարություն Հարությունյանի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4.1 հավելվածը՝ 243-րդ, 244-րդ, 252-րդ, 257-րդ և 258-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը, հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ վերջինս մասնակցելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ինչպես նաև Ա/Ձ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ ***19.05.2016թ.-ից*** հաշված մեկ տարվա ընթացքում՝ ***23.09.2016թ. կրկին հայտ է ներկայացրել*** ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով, ինչը հիմք է Ա/Ձ Հարություն Հարությունյանին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2016թ. թիվ 03/73-3/25020-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Հարություն Հարությունյանին (ՀՎՀՀ՝ 27913868) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Մարտիրոսյան Հարություն**

Բաղալյան Սյունե